ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանում սույն թվականի հոկտեմբերի 1-ին կայանալիք մրցույթի մասին

31.08.2021

Տիպ՝ Մրցույթի մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանը 2021 թվականի, հոկտեմբեր 1-ին, հայտարարում է կառուցապատման իրավունքի բաց մրցույթ, համայնքային սեփականության անշարժ գույքի, հետևյալ լոտով՝Լոտ 1: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Ամոջ գյուղի կադաստրային քարտեզի 06-112-0937-0003 ծածկագրով, գյուղ Ամոջ, փողոց 1 թիվ 2/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 0.0117 հեկտար մակերեսով հողամասը հասարակական կառուցապատում իրականացնելու նպատակով:Կառուցապատման իրավունքի տարեկան մեկնարկային վարձավճարը կազմում է 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ: Մրցույթում հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի կողմից լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Անշարժ գույքը ունի համապատասխան կոմունալ հնարավորություններ,մոտեցում ընդհանուր օգտագործման ճանապարհից:

Կառուցապատման իրավունքի մրցույթը տեղի կունենա 2021 թվականի, հոկտեմբերի 1-ին, ժամը 11:00-ին, Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ փողոց 6 շենք 10, առաջին հարկ, թիվ 2 սենյակում: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի սեպտեմբերի 28-ը, ժամը 18:00-ն: Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայանալ Օձունի համայնքապետարան՝ անձը հաստատող փաստաթղթով: Լոտերի ուսումնասիրության և կանոնակարգին ծանոթանալու համար ներկայանալ Օձունի համայնքապետարան կամ զանգահարել +37477707038 կամ +37477566724 հեռախոսահամարներով:

Հասցե՝ Օձուն համայնք գյուղ Օձուն փողոց 6 շենք 10

Հեռ.՝ +37477566724

Վեբ կայք՝ odzun.am

Էլ. փոստ՝ Odzun@bk.ru